

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #8

Օգոստոս 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	6
Շինարարություն .....	8
R&D .....	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	13
Կոսմետիկա .....	15
Դեղագործություն .....	16
Այլ ոլորտներ .....	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22
Տեղական նորություններ և միջոցառումներ .....	24

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մենդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Ռումինական ընկերությունը, որը զբաղվում է փաթեթավորված սննդամթերքի և խմիչքների մեծածախ վաճառքով, առաջարկում է պահածոների, համեմունքների, մակարոնեղենի, յուղի, բնական հյութերի ու էներգետիկ խմիչքների տարբեր տեսակներ: Ընկերությունը ցանկանում է կնքել տարածման ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծածկագիր. BORO20170615001

### *Ռումինական արտադրողը փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ*

Ռումինական ընկերությունը Տրանսիլվանիայից, որը մասնագիտացած է գյուղատնտեսության ոլորտում, արտադրում է էներգետիկ ըմպելիքներ, եգիպտացորենի ձողիկներ և տնական շոկոլադ: Չնայած ընկերության արտադրանքը բաժանված է վերոնշյալ

երեք կատեգորիաների՝ այն արտադրում է մեծ քանակությամբ՝ համապատասխան եվրոպական ամենաբարձր որակի և անվտանգության ստանդարտներին: Ընկերությունը պատրաստ է միջազգայնորեն ընդարձակվելու և հետևաբար փնտրում է սննդամթերքի շուկայում ուժեղ փորձ ունեցող դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BORO20160908001

***Լեհական ընկերությունը փնտրում է սառեցված սննդամթերքի դիստրիբյուտորներ***

Լեհական ընկերությունը, որը զբաղվում է սառեցված սննդամթերքի, մրգերի, բանջարեղենի, բանջարեղենային խառնուրդների և սառեցված կերակրատեսակների տարածմամբ, փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է համագործակցություն՝ տարածման ծառայությունների համաձայնագրի շրջանակում:

Ծածկագիր. BOPL20170607008

***Ռումինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է տարբեր օրգանական ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտոր իր բնական թեյերի տարածման համար, որոնք նախատեսված են տարբեր հիվանդությունների, վարակների և խանգարումների կանխարգելման համար: Ընկերությունն առաջարկում է բնական, բուսական արտադրատեսակների լայն ընտրանի, իրենց պատրաստման ամենապարզ եղանակով և փնտրում է միջազգային դիստրիբյուտորներ, որոնք պատրաստ են խթանել և տարածել ռումինական բնական արտադրանքն արտերկրում:

Ծածկագիր. BORO20160531001

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Լեհական ընկերությունը ցանկանում է ձեռք բերել տնական համեմունքներ արտադրական պայմանագրի հիմունքներով***

Լեհական ընկերությունը, որը գործում է սննդի ոլորտում, փնտրում է բնական առանց հավելանյութերի համեմունքներ: Համային, գունավոր իրենց հատկությունները պահող այս նյութերը կօգտագործվեն ֆունկցիոնալ համեմունքային խառնուրդների պատրաստման համար: Ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրողների, արտահանողների և մեծածախ առևտրով զբաղվողներ հետ նրանց հետ կնքելով արտադրական պայամանագիր:

Ծածկագիր. BRPL20170713001

***Պահածոներ արտադրող իտալական ընկերությանն անհրաժեշտ են հումք արտադրողներ***

Իտալական ընկերությունը, որը գտնվում է Սիցիլիայում և հանդիսանում է պահածոյացված սննդի ոլորտում առաջատար, փնտրում է հումք իր արտադրությունը իրականացնելու համար: Ընկերությանն անհրաժեշտ են գործընկերներ արտադրական պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRIT20170303001

***Լեհական ՓՄՁ-ն փնտրում է կերակրի բաղադրիչներ արտադրողներ և առաջարկում է իր ծառայությունները որպես դիստրիբյուտոր և գործակալ***

Լեհական ՓՄՁ-ն , որը գործում է կերակրի և սննդի շուկայում, փնտրում է կերակրի բաղադրիչներ արտադրողների: Կերակրի բաղադրիչները օգտագործվելու են ձկան, թռչունների և գյուղատնտեսական կենդանիների կերերի համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ և առաջարկում է իր ծառայությունները որպես դիստրիբյուտոր և գործակալ: Քանի որ ընկերությունը ունի մեծ և հարուստ փորձառություն ապրանքի տարածման ոլորտում, այն կարող է առաջարկել բարձր որակի համագործակցություն:

Ծածկագիր. BRPL20170518001

***Շվեդական ներմուծողը փնտրում է մատակարար***

Շվեդական ներմուծողը ստեղծել է նոր շուկայի մաս՝ բաձրակարգ և բարձրորակ օրգանական քաղցրավենիքի խառնուրդների հատվածով: Նրանք փնտրում են շաքարով պատրաստված քաղցրավենիք կամ շոկոլադ արտադրողներ:

Ծածկագիր. BRSE20161031001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### ***Ընկերությունն առաջարկում է արտադրական պայմանագրեր բնական բամբակյա գործվածքների և հագուստի այլ ապրանքանիշերի համար***

Իսպանական տեքստիլ արտադրող ընկերությունն առաջարկում է արտադրական պայմանագիր այլ ապրանքանիշով մաքուր բնական տրիկոտաժե և հյուսած գործվածքներ արտադրող ընկերություններին: Ընկերությունը հետաքրքրված է նաև վերավաճառողների և առևտրի այլ միջնորդների հետ դիստրիբյուտորական և առևտրային պայմանագրերի հաստատմամբ՝ իր բնական բամբակյա գործվածքները տարածելու նպատակով: Բացի այդ, ընկերությունը ունենալով իր սեփական ապրանքանիշը, ցանակնում է կնքել դիստրիբյուտորական և առևտրային պայմանագրեր իր ապրանքը Եվրոպայում տարածելու համար:

Ծածկագիր. BOES20170719002

### ***Ֆրանսիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Ֆրանսիական փոքր ընկերությունը հիմնված 2016թ.-ին Ֆրանսիայի հարավային հատվածում, արտադրում է բարձրորակ սրբիչներ նախատեսված լողափի համար: Ընկերությունն արդեն մեկնարկել է իր արտադրանքի առևտրականացումը՝ սեփական առցանց խանութների միջոցով և հիմա փնտրում է գործընկեր արտադրանքի տարածման համար:

Ծածկագիր. BOFR20170630001

**Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է ենթակապալառուի ծառայություններ**

Թուրքական ընկերությունը, որն արտադրում է տեքստիլե իրեր բժշկական օգտագործման համար, փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունը ցանկանում է հանդես գալ նաև որպես ենթակապալառու առաջատար ընկերությունների համար:

Ծածկագիր. BOTR20170612001

**Ընկերությունը ցանկանում է կնքել տարածման և արտադրական պայմանագրեր**

Իտալական ընկերությունն արտադրում է տղամարդկանց համար նախատեսված վերնահագուստ: Ընկերությունը փնտրում է արտասահմանյան նորաձևության ապրանքանիշեր, վերավաճառողների և մեծածախ առևտրով զբաղվողներ՝ արտադրական և դիստրիբյուտորական պայմանագրեր կնքելու համար:

Ծածկագիր. BOIT20170620002

**Ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռուսական ընկերությունը, որը զբաղվում է յուրաքանչյուր ծառայության ոլորտի, ինչպես նաև եռակցողների համար նախատեսված ամառային և ձմեռային աշխատանքային հագուստի արտադրությամբ փնտրում է գործընկերներ՝ դիստրիբյուտորական ծառայության պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BORU20170714003

**Խորվաթական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներին**

Խորվաթական ընկերությունը դիստրիբյուտորներին և վերավաճառողներին առաջարկում է նորարարական անկողնային արտադրանք՝ նախատեսված երեխաների համար: Արտադրանքը նախատեսված է քնի ընթացքում երեխաներին հեշտությամբ ծածկելու համար, որը բացառում է ծածկոցի ընկնելը քնի ժամանակ:

Ծածկագիր. BOHR20170608001

**Գործարար համագործակցության հարցումներ**

**Հունգարական արտադրողը փնտրում է ենթակապալառուներ**

Հունգարական ընկերությունն արտադրում է մեծահասակների (կանանց և տղամարդկանց) և երեխաների համար նախատեսված ներքնագգեստ: Ընկերությունը փնտրում է լողագգեստների կարող զբաղվող ընկերությունների ենթակապալառուի հավաքական

աշխատանքի համար: Ակնկալվող համագործակցությունը ենթադրում է ենթակապալառուի և արտադրական պայմանագրի կնքում:

Ծածկագիր. BRHU20170720001

***Դանիական նորաձևությամբ զբաղվող ընկերությունը փնտրում է անկողնային պարագաներ արտադրողներ***

Կոպենհագենում գտնվող դանիական փոքր ընկերությունը, որը զբաղվում է տեքստիլի դիզայնով, փնտրում է բամբակի վրա թվային տպագրություն իրականացնող անկողնային պարագաներ արտադրողներ: Ընկերությունն առաջարկում է կնքել արտադրական պայմանագրեր:

Ծածկագիր. BRDK20170607001

## Շինարարություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

***Ընկերությունը փնտրում է նորարարական շինարարության ոլորտում համագործակցություն՝ ծառայությունների մատուցման և արտադրական պայմանագրի հիմունքներով***

Լատվիական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարության ոլորտում, ցանկանում է համագործակցել գիտահետազոտական և մշակման նախագծերի շրջանակում, որն ուղղված է կյանքի ցիկլի գնահատման, էներգետիկ կոնցեպտի ու ներկայացման, ստանդարտ և ոչ ստանդարտ ճարտարապետության, բետոնե և պոլիմերային տեխնոլոգիաների, վերամշակման տեխնոլոգիաների, կոմպոզիտային փայտե նյութերով շինարարական



տեխնոլոգիաների և մոդուլային շինարարության վրա: Ցանկալի համագործակցությունն է ծառայությունների մատուցման և արտադրական պայմանագրերի կնքումը:

**Ծածկագիր. BOLV20170711001**

***Գերմանական ընկերությունն առաջարկում է ծառայությունների մատուցման պայմանագիր ստորագրել***

Հյուսիսային Գերմանիայում տեղակայված ընկերությունը առաջարկում է համագործակցել շինարարական նյութեր արտադրող ընկերություններին կամ այլ ընկերություններին, ովքեր ցանկանում են բարելավել արտադրանքի, ինչպես նաև համակարգի որակը՝ համապատասխան շրջանաձև տնտեսության հասկացության: Առաջարկվում են գնահատման, խորհրդատվության և C2C մեթոդոլոգիայի վրա հիմնված սերտիֆիկացման ծառայություններ՝ հիմնված մարդու, շրջակա միջավայրի և տնտեսական շահերի վրա:

**Ծածկագիր. BODE20170711001**

***Ընկերությունը փնտրում է գործընկեր Լեհաստանում անշարժ գույքի ընդհանուր ձեռքբերման համար, որը նախատեսված է բժշկական կենտրոն հիմնելու համար և իր մեջ ներառում է ՄՊԱ կենտրոն և հյուրանոց***

Լեհաստանի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող ընկերությունն առաջարկում է ընդհանուր ներդրումներ կատարել մի գույքի մեջ, որը տեղակայված է Knyszyn Forest Landscape Park-ում: Ներկայումս ողջ կառույցը անավարտ է (հասցրած է ավարտին 55%-ը): Հողատարածքը կազմում է 2,6478 հա է, իսկ շենքի ընդհանուր մակերեսը 10.763,60 մ2 է: Գույքը նախատեսված է առողջարարական կենտրոնի հիմնման համար, որը պարունակում է ՄՊԱ կենտրոն , հյուրանոց և կոնֆերենս սրահ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել կնքելով ձեռքբերման պայմանագիր:

**Ծածկագիր. BOPL20170518001**

***Հունական ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական պայմանագիր***

Հունական ընկերությունը՝ տեղակայված Ատտիկայում, որը զբաղվում է դեկորատիվ ներկերի ու լաքերի արտադրությամբ, փնտրում է օտարերկրա գործընկերոջ արտադրական պայմանագիր կնքելու նպատակով:

**Ծածկագիր. BOGR20160407001**

***Ռումինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է անտառանյութերի և փայտե իրերի՝ ծղոտե ներքնակների, շրջանակների և արկղերի արտադրության ոլորտում և դրանց

մեծածախ վաճառքում, փնտրում է դիստրիբյուտորների այլ երկրներում:

Ծածկագիր. BORO20160803002

***Լեհական ընկերությունն առաջարկում է մետաղական կոնստրուկցիաներ արտադրական և ենթակապալառուի պայմանագրերի կնքման հիմունքով***

Լեհական ընկերությունը զբաղվում է անհատական պատվերների իրականացմամբ և արտադրում է օդանավակայաններում ուղեբեռի փոխադրման համար նախատեսված ձեռնասայլակներ, շարժական սայլակներ և այլ պահող համակարգեր: Ընկերությունը փնտրում է գործընկերներ պողպատե և ալյումինե կոնստրուկցիաների արտադրության ոլորտում՝ արտադրական և ենթակապալառուի պայմանագրեր կնքելու համար:

Ծածկագիր. BOPL20160518001

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Շվեդական շիանարարական ընկերությունը փնտրում է փորձառու ատաղձագործ՝ ենթակապալառուի պայմանագրով աշխատելու համար***

Շվեդական շիանարարական ընկերությունը փնտրում է փորձառու ատաղձագործ որպես ենթակապալառու: Ենթակապալառուն պետք է ունենա առնվազն 3 տարվա փորձ, կարողանա աշխատել Շվեդիայում և դուրս գրել հաշիվներ: Ծրագրի միջին տևողությունն է 10 ամիս: Շվեդական ընկերությունը կապահովի կեցության ծախսերը և ծրագրի համար անհրաժեշտ անձնական սարքավորումները:

Ծածկագիր. BRSE20170710001

***Խորվաթական մետալուրգիական ընկերությունն առաջարկում է մետաղական իրերի տարածում***

Խորվաթական ընկերությունը, որը գործում է մետալուրգիայի ոլորտում, առաջարկում է տարածման ծառայություններ իրականացնել խորվաթական շուկայում մետաղ արտադրող ընկերություններ համար :

Ծածկագիր. BRHR20170609001



***Eurostars2: Որոնվում է գործընկեր կոնսորցիում ստեղծելու համար, որի նպատակն է մշակել բազմակի վերին վերջույթային մկանային վարժության համար սարք՝ օգտագործելով վիրտուալ իրականությունը և գլխի վրա տեղադրված էկրանի տեխնոլոգիան***

Կորեկան ընկերությունը, որը մասնագիտացած է ավտոմացված մեքենաների ոլորտում, փնտրում է գործընկեր վերին վերջույթային մկանային վարժության համար սարք մշակելու և իրագործելու համար՝ Eurostars2 ծրագրին դիմելու շրջանակներում: Պոտենցիալ գործընկերը պետք է ունենա փորձ վիրտուալ իրականության 3D համակարգչային գրաֆիկայի ոլորտում՝ հիմնված 3D ձայնի, 3D տեսանյութի, հեռավոր տեսանյութերի բարձրորակ մշակման տեխնոլոգիայի և հիվանդանոցային կլինիկական փորձարկումների մեծ տվյալների վրա:

Ծածկագիր. RDKR20170228003

***EUROSTARS-2: ՇՏԱՊ: Որոնվում է ՓՄՁ կամ արդյունաբերական էներգիայի ոլորտի հետ կապ ունեցող մեծ ընկերություն՝ մշակելու ՏՀՏ գործիք էներգետիկ վաճառքը օպտիմալացնելու համար:***

Իսպանական հետազոտական կենտրոնը, որը մասնագիտացած է էներգիայի ոլորտում, փնտրում է մի ընկերություն, որի հետ կարող է մասնակցել Eurostars-2 ծրագրին և մշակել վիրտուալ ամբողջական հարթակ արդյունաբերական էներգիայի արտադրման կառավարման և պլանավորման համար: Գործընկերոջ դերը կլինի զարգացնել և ստուգել ՏՀՏ գործիքը, որը միավորում է որոշ գործառույթներ արդյունաբերական արտադրանքի կամ արտադրության ոլորտի օպտիմալ վաճառքի, ինչպես նաև սպառողների և մշակողների համար:

Ծածկագիր. RDES20170704001

***EUROSTARS-2: ՇՏԱՊ: Որոնվում է ՓՄՁ կամ արդյունաբերական էներգիայի ոլորտի հետ***

**կապ ունեցող մեծ ընկերություն՝ մշակելու S2S գործիք էներգետիկ վաճառքը  
օպտիմալացնելու համար:**

Իսպանական հետազոտական կենտրոնը, որը մասնագիտացած է էներգիայի ոլորտում, փնտրում է մի ընկերություն, որի հետ կարող է մասնակցել Eurostars-2 ծրագրին և մշակել վիրտուալ ամբողջական հարթակ արդյունաբերական էներգիայի արտադրման կառավարման և պլանավորման համար: Գործընկերոջ դերը կլինի զարգացնել և ստուգել S2S գործիքը, որը միավորում է որոշ գործառույթներ արդյունաբերական արտադրանքի կամ արտադրության ոլորտի օպտիմալ վաճառքի, ինչպես նաև սպառողների և մշակողների համար:

**Ծածկագիր. RDES20170704001**

**EUROSTARS 2: Մշակել առցանց հավելվածներ և սենսորային ցանցային արտադրանք**

Կորեական ընկերությունը, որը զբաղվում է համակարգային ինտեգրման և տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների տարածմամբ, փնտրում է Eurostars2-ին մասնակցելու համար գործընկերներ: Ընկերությունը հետաքրքրված է հիմանականում առցանց հավելվածներով և սենսորային ցանցային արտադրանքով: Այն ցանկանում է հետազոտական համագործակցություն իրականացնել գիտահետազոտական և մշակման աշխատանքներ իրականացնող կառույցների, համալսարանների կամ առցանց հավելվածների մշակման ոլորտում փորձ ունեցող ընկերությունների հետ:

**Ծածկագիր. RDKR20170710001**

**H2020: Վերահսկման համակարգեր միկրո ագրո-պարենային ընկերությունների համար**

Իտալական ընկերությունը, որը ունի մասնագիտական մեծ փորձ նորարարական հսկողական համակարգերի ոլորտում, մշակել է շատ ճկուն վերահսկման համակարգ՝ նախատեսված այն միկրո և փոքր ընկերությունների համար, որոնք աշխատում են սննդի վերամշակման և գյուղատնտեսության ոլորտում: Իտալական ընկերությունը ցանկանում է գտնել կազմակերպություններ և միավորումներ կամ կլաստերներ, որոնք հետաքրքրված կլինեն Horizon 2020 –ի շրջանակներում դիմելու ՓՄՁ գործի մրցույթին հետազոտական համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. RDIT20170704001**

**Մոլդովական բժշկական կենտրոնը փնտրում է ձեռքբերովի մեոպիայի կանխարգելման և բուժման ոլորտում նոր մշակումներ իրականացնող (կարճատեսություն) գործընկերներ՝  
հետազոտություն իրականացնելու համար:**

Մոլդովայում գտնվող բժշկական կենտրոնը մշակել է նոր մոտեցում ձեռքբերովի մեոպիայի բուժման և կանխարգելման համար: Կենտրոնը հետաքրքրված է գործընկերություն

հաստատել նմանատիպ կազմակերպություններ հետ վերը նշված գիտահետազոտական ոլորտում՝ գնահատելու բուժման և առաջադիմության կանխարգելման արդյունավետությունը ձեռքբերված մեդիայի միջոցով, ֆիզիոթերապևտիկ բուժման և կիրառվող հայման թերապիայի միջոցով:

Ծածկագիր. RDMD20170616001

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### *SS ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Լեհական ընկերությունը ծրահրային տուն է, որը մասնագիտացած է կառույցների նախագծման ծրագրային ապահովման ոլորտում՝ հիմնված շենքի տեղեկատվական մոդելավորման գաղափարախոսության վրա: Ընկերությունը գործում է արդեն 20 տարի և ունի արտահանման փորձ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ հետագա զարգացումը ապահովելու նպատակով: Ակնկալվում է կնքել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծածկագիր. BOPL20170713002

#### *SS ընկերությունն առաջարկում է որակավորված դասընթացներ SS անվտանգության, ցանցի և գործող համակարգերի մասին*

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է ընկերության ներսում դասընթացների կազմակերպման և փոխկապակցված Ակադեմիայի հետ համագործակցության միջոցով SS խորհրդատվության տրամադրման գործով,

առաջարկում է որակավորված դասընթացներ SS անվտանգության, ցանցի և գործող համակարգերի վերաբերյալ: Գործընկեր կարող է դառնալ ընկերություն, որը ցանկանում է վերապատրաստել իր աշխատակիցներին ծառայությունների մատուցման պայմանագրի հիմունքներով կամ օտարերկրյա ընկերություն, որը պատրաստ է համագործակցել շուկայում առևտրային գործակալի պայմանագրի կամ աութօրսինգային հիմունքներով:

**Ծածկագիր. BORO20170703001**

***Ռումինական SS մասնագետն առաջարկում է իր աութօրսինգային ծառայությունները***

Ռումինական ընկերությունը, որը գտնվում է Տրանսիլվանիայում և ունի անդրազգային համագործակցության փորձ, ցանկանում է մատուցել ծրագրային լուծումների և փոխկապակցված SS ծառայությունների հետ կապված աութօրսինգային ծառայություններ օտարերկրյա ընկերությանը:

**Ծածկագիր. BORO20160722003**

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Բելգիական ընկերությունը, որը ակտիվ է ցանցային և թվային տեղական շուկայավարման ոլորտում, փնտրում է ձեռքբերման պայմանագիր***

Բելգիական ընկերությունը, հիմնված 2010թ., առաջարկում է ցանցային (web-to-store) լուծումներ, որոնք օգնում են համացանցի միջոցով խանութներին և այլ բիզնեսներին սահմանելու իրենց տեղայնքը , մասնավորապես տեղայնքը պարզելով հավելվածների միջոցով: Ընկերությունը օգնում է ընկերություններին ստեղծել և փորձարկել իրենց կայքերում և բջջային հավելվածներում խանութի տեղայնքը սահմանող ծրագրեր: Ընկերությունը ցանկանում է համագործակցել վեբ մարկետինգային կամ թվային գործակալությունների հետ:

**Ծածկագիր. BRBE20170308001**



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Բուլղարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Բուլղարական ընկերությունը, որը արտադրում է կոսմետիկ միջոցներ և ունի ավելի քան 37 տարվա փորձ և ավանդույթներ, փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունն առաջարկում է մեծ տեսականի որը ներառում է ատամների հիգիենայի, մազերի խնամքի և ներկման, մաշկի և մարմնի խնամքի միջոցներ, ինչպես նաև բազմատեսակ արևապաշտպան և երեխաների մաշկի խնամքի համար նախատեսված ապրանքներ:

Ծածկագիր. BOBG20170712002

### *Հարավկորեական ընկերությունը ցանկանում է կնքել առևտրային գործակալի և դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագիր*

Հարավկորեական ընկերությունն ունի մասնագիտական մեծ փորձ կոսմետիկ և այլ բուժիչ միջոցների վաճառքի և մարկեթինգի ոլորտում: Ներկայումս ընկերությունը փնտրում է գործընկերոջ, ով ունի դիստրիբյուտորական լավ հնարավորություններ նշված ապրանքների ոլորտում:

Ծածկագիր. BOKR2017042100

### *Կոսմետիկա արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Լյուքսեմբուրգում հիմնված ընկերությունն առաջարկում է պրոֆեսիոնալ որակի ոտքերի և ձեռքերի խնամքի ապրանքներ՝ առանձին փաթեթավորմամբ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ նրանց հետ ապրանքի տարածման պայմանագիր, ինչպես նաև ֆինանսական աջակցության պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOLU20170712001

# Դեղագործություն



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

***Բժշկական ծառայություններ ապահովող հունգարական ընկերությունն առաջարկում է համագործակցել ծառայությունների մատուցման կամ ենթակապալուի պայմանագրերով***

Հունգարական ընկերությունը, որը գործում է առողջապահական ոլորտում, առաջարկում է ամբուլատոր ծառայություններ, աերումեդիկ հետազոտություն, սքրինինգ փաթեթներ, լաբորատոր թեստեր, կլինիկական հետազոտություններ և դեղագործական փորձարկումներ դեղագործական ընկերությունների և առողջապահական ծառայություններ մատուցողների համար:

Ծածկագիր. BOHU20161006002

***Ավստրիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորի***

Ավստրիական ընկերությունը փնտրում է գործընկերոջ, ով հետաքրքրված կլինի գործել որպես բացառիկ ներկայացուցիչ (դիստրիբյուտոր, ներմուծող) նորարարական թերապևտիկ փափուկ լազերային սարքավորման համար, որը պատրաստված է Ավստրիայում:

Ծածկագիր. BOAT20161018001

***Չեխական ընկերությունը փնտրում է ներդրող միջազգային բժշկական կենտրոն հիմնելու համար***

Չեխական ընկերությունը, որն ունի ակտիվ գործունեություն բժշկական ոլորտում, փնտրում է ռազմավարական գործընկերոջ՝ բժշկական փորձառությամբ համատեղ ստեղծելու Քվանտային բժշկության կենտրոն: Ընկերությունը ցանկանում է գտնել ներդրող և առաջարկում է կնքել համատեղ ձեռնարկություն հիմնելու, ֆինանսական և



ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Ծածկագիր. BOCZ20160905001

## Գործարար համագործակցության հարցումներ

*Չեխական ընկերությունը առողջապահական ոլորտից փնտրում է արտադրողների կամ մատակարարների*

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է տեղական սոցիալական շուկայի լավ գիտելիքներով՝ պայմանավորված բժշկական նյութերի, սարքերի ու օժանդակ միջոցների ներմուծման և բաշխման ծառայությունների ոլորտում, առաջարկում է իրեն որպես այս ոլորտի դիստրիբյուտոր: Ընկերությունը փնտրում է օդը մաքրող արումատիկ սարքերի, ախտահանող սարքերի և բժշկական պարագաների արտադրողներ կամ մատակարարներ:

Ծածկագիր. BRCZ20170302001

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

*Պորտուգալական ընկերությունը ցանկանում է հաստատել ենթապայմանագրային կամ արտադրական համագործակցություն*

Պորտուգալական ընկերությունը, որը հիմնադրվել է 1965թ.-ին, զբաղվում է մակերեսային մշակմամբ կամ առանց դրա պողպատե, ալյումինե, պղնձե, չժանգոտվող պողպատից պատրաստված բաղադրիչների արտադրությամբ և ցանկանում է հաստատել

Ենթակապալառուի կամ արտադրական համագործակցություն:

Ծածկագիր. BOPT20170717003

***Արտադրողն առաջարկում է կնքել ֆրանչայզի կամ տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրեր***

Միացյալ Թագավորությունում գտնվող այս ընկերությունը մասնագիտացած է անիվի հավասարեցման բարձրորակ համակարգերի նախագծման, պատրաստման և մատակարարման գործում: Ընկերությունն արտադրում է լայն տեսականի, որը նախատեսված է ինչպես ավտոմեքենաների և բեռնատար մեքենաների անիվների հավասարեցման համար, այնպես էլ՝ դրանց համապատասխան արքեսուարներ: Ներկայումս ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր արտադրանքը դեպի միջազգային շուկա և փնտրում է գործընկերներ նրանց հետ տարածման, առևտրային կամ ֆրանչայզի համաձայնագրեր կնքելու համար:

Ծածկագիր. BOUK20170728002

***Իտալական ընկերությունը փնտրում է գործընկեր՝ ծառայությունների մատուցման համաձայնագիր կնքելու նպատակով***

Իտալական ընկերությունը, որն ունի էլեկտրական շարժիչների, պոմպերի և օդափոխիչների վերանորոգման փորձ, փնտրում է օտարերկրյա գործընկերներ՝ բիզնեսի ընդլայնման համար: Ընկերությունը, որը կատարում է փաթեթավորում, հաստոցների, կշեռքների և ճոպանների վերանայում, առաջարկում է իր վերանորոգման ծառայությունները կնքելով ծառայությունների մատուցման պայմանագիր: Ընկերությունը վաճառում է նաև նոր էլեկտրական շարժիչներ, պոմպեր, օդափոխիչներ և փնտրում է դիստրիբյուտորներ ու առևտրային գործակալներ՝ արտասահմանում իր բիզնեսը ընդլայնելու համար:

Ծածկագիր. BOIT20170524002

## **Գործարար համագործակցության հարցումներ**

***Ռումինական ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական համաձայնագիր***

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է վերելակների և էլեկտրական սարքավորումների վերանորոգման և սպասարկման գործում: Ընկերությունը փնտրում է վերելակների առանձին մասեր արտադրողներ՝ արտադրական համաձայնագիր կնքելու

նպատակով:

Ծածկագիր. BRRO20160208001

***Պահանջվում են երեխաներին լուսանկարելու համար անհրաժեշտ արքեսուարներ***

Լեհաստանի հյուսիսարևմտյան հատվածում գտնվող ընկերությունը, որը մասնագիտացած է արտիստիկ ֆոտո-լուսանկարչության ոլորտում փնտրում է երեխաներին լուսանկարելու համար անհրաժեշտ արքեսուարներ (հագուստ, հենակներ, լուսանկարչության ետին ֆոներ և այլն): Ակնկալվում է կնքել արտադրական և դիտրիբյուտորական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20161221002

***Ռուսական ընկերությունը փնտրում է արտադրողներ***

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է ներկեր մետաղական մակերևույթների համար, փնտրում է հումքի մատակարարներ՝ արտադրական համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20170112001

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Արտադրողը փնտրում է գործընկերներ***

Պերմ քաղաքում գործող ռուսական ընկերությունը մատակարարում է բժշկական սպասարկման սարքավորումներ՝ ֆիզիոթերապիայի, վերականգնողական, պրոֆեսիոնալ թերապիաների համար: Ընկերությունը փնտրում է եվրոպայում բժշկական սարքավորումներ արտադրողների կոնտակտներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրեր հաստատելու նպատակով:


Ծածկագիր. BRGE20170208001

***Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրանքի տարածման պայմանագիր***

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղական իրերի արտադրության և դրանց տարածման բնագավառում, փնտրում է հատիչ գործիքներ և մետաղ մշակող սարքավորումներ արտադրողների և մատակարարների՝ նրանց հետ արտադրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20161114001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### *Պորտուգալական գիտահետազոտական ինստիտուտն առաջարկում է իր գիտելիքները տարածական և երկրաչափական չափիչ ենթակառուցվածքների ոլորտում*

Ազգային հավատարմագրման մարմնի կողմից հավատարմագրված որակավորման, չափման և անորոշության մոդելավորման փորձ ունեցող պորտուգալական գիտահետազոտական ինստիտուտի կիրառական չափագիտության ենթակառուցվածքն առաջարկում է իր գիտելիքները և իր տարածական ու երկրաչափական չափիչ ենթակառուցվածքների օգտագործումը: Այս լաբորատորիան մասնագիտացված է ինժեներական հետազոտությունների համար կիրառվող գործիքավորման, չափման և փորձարկման ուղղությամբ և նպատակ է հետապնդում կնքել հետազոտական կամ տեխնիկական համագործակցության համաձայնագիր:

Ծածկագիր. TOPT20170725002

### *Մանիլաթերքի բաղադրիչ հանդիսացող սպիտակուցային խառնուրդ*

Չեխական ընկերությունը, որը հանդիսանում է ձվի սննդարար սպիտակուցային խառնուրդի արտոնագրատերը, հետաքրքրված է սպիտակուցի բարձր պարունակությամբ առողջ սննդամթերքի հետագա զարգացմամբ: Ընկերությունը փնտրում է գործընկեր, որն արտադրում է առողջարար մթերք և հետաքրքրված կլինի սպիտակուցային խառնուրդը սննդի մեջ կիրառելու ուղղությամբ: Ակնկալվում է առևտրային կամ տեխնիկական աջակցության համաձայնագիր կնքել:

Ծածկագիր. TOCZ20170711002

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### *Որոնվում են բժշկական սարքերի մշակման փորձ ունեցող ընկերություններ*

Մեծ Բրիտանիայում գտնվող համալսարանը մշակել է նոր ջերմային հարթակի հայտնաբերման տեխնոլոգիա, որը կարող է վերամշակվել որպես շարժական սարք ախտորոշման համար: Նրանք փնտրում են գործընկերներ, ովքեր ունեն փորձ բժշկական սարքավորումների և ախտորոշիչ սարքերի ոլորտում և կարող են օգնել միասին մշակել տեխնոլոգիա՝ լաբորատոր ապացույցից մինչև նախատիպ: Նախատեսվում է կնքել հետազոտական և տեխնիկական համագործակցության համաձայնագիր:

Ծածկագիր. TRUK20170731002

### *Նոր արմատուրաների մշակում լիովին նոր ոճի խոհանոցների համար*

Գերմանական բարձրորակ կահույք արտադրողը փնտրում է գործընկեր մշակելու թեթև, բայց միևնույն ժամանակ դիմացկուն արմատուրաներ, որոնք կձառայեն որպես կահույքի ճակատային հատվածի միացում: Ընկերությունը ցանկանում է մեկնարկել նոր և յուրահատուկ արմատուրաներ, որոնք տալիս են խոհանոցային կահույքի արտադրությանը նոր ընթացք: Ընկերությունը փնտրում է գործընկեր, ով կարող է ստեղծել արմատուրաների նախատիպ և կնքել նրա հետ արտադրական կամ տեխնիկական համագործակցության համաձայնագիր:

Ծածկագիր. TRDE20170718001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Սեպտեմբեր

08/09/2017	<b>Riga Food Brokerage Event 2017 (Ռիգա, Լատվիա)</b>  Սանդի արդյունաբերության տոնավաճառ - Riga Food- ը տարեկան նշում է սանդի արդյունաբերության զարգացման միտումները, կարևորում է նորությունները և ներկայացնում է մի շարք լուրջ ու վստահելի ձեռնարկություններ: Թիրախային մասնակիցներն են՝ ՓՄՁ-ները, որոնք ցանկանում են առաջարկել կամ ձեռք բերել նոր արտադրանք, և սննդամթերքի նորարարական տեխնոլոգիաներ մշակողներն ու հետազոտողները:
------------	--

## Հոկտեմբեր

04/10/2017	<b>Food Market Place 2017 (Վիեննա, Ավստրիա)</b>  Marketplace Austria-ն բացառիկ հնարավորություն է միջազգային սննդամթերքի և խմիչքների գնորդների համար այցելելու Ավստրիա և հանդիպելու մատակարարների ու արտադրողների հետ, ինչպես նաև վայելելու Ավստրիայի համր: Ավստրիայի դաշնային տնտեսական պալատը Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ կազմակերպում է ավստրիացի սննդամթերք արտադրողների, մանրածախ մեծածախ առևտրով զբաղվողների համար միջազգային համագործակցության ֆորում: Միջազգային գնորդները կմեկնեն Վիեննա, Ավստրիայի սննդամթերքի և խմիչքների արտադրողների հետ հանդիպումների, կայցելեն ընկերություններ և արտադրական վայրեր ու կվայելեն մի շարք հետաքրքիր և տեղեկատվական ներկայացումներ ավստրիական սննդի արդյունաբերության վերաբերյալ:
------------	--

## Հոկտեմբեր

05/10/2017	<p><b>International Brokerage Event - Smarter Region 2017 Օստրավա, Չեխիա)</b></p> <p>Ցանցային միջոցառումը նպատակաուղղված կլինի մի շարք ընկերությունների, համալսարանների և հետազոտողների միջև, ովքեր շահագրգռված կլինեն նոր նախագծերի գաղափարների փոխանակմամբ և համագործակցությամբ: Մասնակիցները կարող են նախապես պլանավորվել երկկողմ հանդիպումներ: Մեկ հանդիպումը կտևի մինչև 20 րոպե:</p>
------------	---

## Նոյեմբեր

14/11/2017- 16/11/2017	<p><b>Healthcare brokerage event Medica 2017 (Դյուսելդորֆ, Գերմանիա)</b></p> <p>MEDICA- ի այս միջազգային առողջապահական համագործակցության հաստատման միջոցառումը ավանդույթ է դարձել ավելի քան 15 տարի: Նպատակն է աջակցել ձեռնարկություններին, բուհերին և գիտահետազոտական հաստատություններին գործընկերներ գտնել Եվրոպայում և նրանց հետ հաստատել արտադրանքի մշակման, արտադրական գործընթացին լիցենզավորման, համատեղ ձեռնարկություններ հիմնելու պայմանագրեր կամ այլ տեսակների համագործակցություն:</p>
---------------------------	---

## Տեղական նորություններ և միջոցառումներ

06/06/2017	<p><b>Իրազեկման միջոցառում ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում</b></p> <p>2017թ. -ի հունիսի 6-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում կայացավ իրազեկման միջոցառում՝ փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանն ուղղված առկա տարբեր ծրագրերի և գործիքների մասին: Մասնակիցներին ողջունեց Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի միջազգային համագործակցության ծրագրերի գլխավոր փորձագետ Անի Խանդամիրյանը, ով նաև ներկայացրեց ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործիքները: Նա գործարարներին, ինչպես նաև աջակցող կազմակերպություններին ներկայացրեց ՁԵՑ կողմից տրամադրվող ծառայությունները, ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ ՁԵՑ գործիքների միջոցով կնքված միջազգային համագործակցության օրինակներ, ինչպես նաև տեղեկացրեց ՁԵՑ գործիքների հնարավորությունների մասին: Տեղեկատվական սեմինարի ընթացքում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ներկայացնող ՁԵՑ գլխավոր փորձագետ Անահիտ Խաչիկյանը խոսեց ԵՄ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր Հորիզոն 2020-ի և ՓՄՁ գործիքի մասին: Հայաստանում Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչ Կարեն Ազարյանը ներկայացրեց Արտահանում Եվրամիության երկրներ/ Արտահանման տեղեկատու գործիքը, ինչպես նաև գործող արտոնությունը (GSP+) :</p> <p>Գերմանական տնտեսական միավորումը ներկայացնող Մարիամ Մաժինյանը ներկաներին տեղեկացրեց իրենց կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների մասին, իսկ ավագ փորձագետների ծառայության ծրագրի տարաշաշրջանային ղեկավար տկն. Յուլիա Շուվերը ներկայացրեց ավագ փորձագետների ծառայությունը: Արտահանման ապահովագրության գործիքները ներկայացրեց Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության աշխատակից Գրիգոր Գասպարյանը:</p>
------------	---



08/06/2017	<p><b>Իրազեկման միջոցառում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում</b></p> <p>2017թ. -ի հունիսի 8-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում կայացավ իրազեկման միջոցառում՝ փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանն ուղղված առկա տարբեր ծրագրերի և գործիքների մասին: Մասնակիցներին ուղջունեց Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի միջազգային համագործակցության ծրագրերի գլխավոր փորձագետ Անի Խանդամիրյանը: Նա ներկայացրեց Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործիքները: Փորձագետը գործարարներին, ինչպես նաև աջակցող կազմակերպություններին ներկայացրեց ՁԵՑ կողմից տրամադրվող ծառայությունները, ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ ՁԵՑ գործիքների միջոցով կնքված միջազգային համագործակցության օրինակներ, ինչպես նաև տեղեկացրեց ՁԵՑ գործիքների հնարավորությունների մասին:</p> <p>Տեղեկատվական սեմինարի ընթացքում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ներկայացնող ՁԵՑ գլխավոր փորձագետ Անահիտ Խաչիկյանը խոսեց ԵՄ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր Հորիզոն 2020-ի և ՓՄՁ գործիքի մասին:</p> <p>Հայաստանում Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչ Կարեն Ազարյանը ներկայացրեց Արտահանում Եվրամիության երկրներ/Արտահանման տեղեկատու գործիքը, ինչպես նաև գործող արտոնությունը (GSP+) : Գերմանական տնտեսական միավորումը ներկայացնող Մարիամ Մաժինյանը ներկաներին տեղեկացրեց իրենց կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների մասին, իսկ ավագ փորձագետների ծառայության ծրագրի տարաշաշրջանային ղեկավար տկն. Յուլիա Շուլլերը ներկայացրեց ավագ փորձագետների ծառայությունը: Արտահանման ապահովագրության գործիքները ներկայացրեց Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության աշխատակից Գրիգոր Գասպարյանը:</p>
------------	--

09/06/2017	<p><b>Իրազեկման միջոցառում ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում</b></p> <p>2017թ.-ի հունիսի 9-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում կայացավ իրազեկման միջոցառում՝ փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանն ուղղված առկա տարբեր ծրագրերի և գործիքների մասին: Մասնակիցներին ուղջունեց Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն Սուրեն Գասպարյանը: ՓՄՁ ՋԱԿ-ի միջազգային համագործակցության ծրագրերի փորձագետ Շուշանիկ Գասպարյանը ներկայացրեց Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործիքները: Նա գործարարներին, ինչպես նաև աջակցող կազմակերպություններին ներկայացրեց ՁԵՑ կողմից տրամադրվող ծառայությունները, ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցությամբ ՁԵՑ գործիքների միջոցով կնքված միջազգային համագործակցության օրինակներ, ինչպես նաև տեղեկացրեց ՁԵՑ գործիքների հնարավորությունների մասին: Հայաստանում Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչ Կարեն Ազարյանը ներկայացրեց Արտահանում Եվրամիության երկրներ/ Արտահանման տեղեկատու գործիքը, ինչպես նաև գործող արտոնությունը (GSP+) : Զբոսաշրջության փորձագետ Անահիտ Ոսկանյանը մանրամասն խոսեց Հայաստանում գյուղական զբոսաշրջության նախադրյալների զարգացման վերաբերյալ: Գերմանական տնտեսական միավորումը ներկայացնող Մարիամ Մաժինյանը ներկաներին տեղեկացրեց իրենց կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների մասին, իսկ ավագ փորձագետների ծառայության ծրագրի տարաշառքանային ղեկավար սկն.Յուլիա Շուլլերը ներկայացրեց ավագ փորձագետների ծառայությունը: Արտահանման ապահովագրության գործիքները ներկայացրեց Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության աշխատակից Գրիգոր Գասպարյանը:</p>
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*